3585

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«01» 04 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 081 - 25

Նախաձեռնող՝ *«ՔԵՅՋԻԷՄ» ՍՊԸ*
ք. Երևան, Եկմալյան 6շ, թիվ 3

Գործունեությունը՝ *Ծաղկաձոր քաղաքի Մ.Մկրտչյան փողոց 60 հասցեում հյուրանոցային համալիրի կառուցում*
Կոտայքի մարզ, ք. Ծաղկաձոր

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 081 - 25

«01» մայիսի **2025թ.**

Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Մ. Մկրտչյան փողոց 60 հասցեում հյուրանոցային համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՔԵՅՋԻԷՄ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Ծաղկաձոր քաղաք Մ. Մկրտչյան փողոց 60 հողամաս

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայանքի Ծաղկաձոր քաղաքի Մ. Մկրտչյան փողոց 60 հասցեում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի՝ 8-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախագծի և հաշվետվության կազմման համար հիմք են հանդիսացել հյուրանոցային համալիրի նախագծային փաստաթղթերը՝

- նախատեսվող տարածքի վերաբերյալ ինժիներաերկրաբանական հետազոտության հաշվետվությունը,
- ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N 04 տրված՝ 24/01/2024թ.:
- հողամասի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն՝ N 18082023-07-0199:

Նկարագրական մաս. Հողամասի մակերեսը 15 հա է և հանդիսանում է կառուցապատումից ազատ տարածք: Ներկայացվող տարածքը գտնվում է Ծաղկաձորի լեռնային գոտու 1740-1800մ բարձրությունների սահմաններում՝ միջին չափավոր խոնավ, տափաստանացված անտառմարգագետնային գոտում: Համաձայն ինժեներաերկրաբանական եզրակացության՝ տեղամասը երկրաբանական

և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից բարենպաստ է կապիտալ շինությունների կառուցապատման համար: Բուն տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ կամ կենդանատեսակներ չեն հայտնաբերվել, հատման ենթակա ծառաթփային բուսականությունը բացակայում է: Պատմամշակույթային հուշարձաններ տարածքում չկան:

Համաձայն նախագծի համալիրը հանդիսանում է հյուրանոցային, սպորտի, հանգստի և ժամանցի համար նախատեսված: Այն՝ կազմված է հյուրանոցային մասնաշենքից՝ 8 վերգետնյա և 1 ստորգետնյա հարկից, հանգստյան տնակներից՝ քոթեջներից, բացօթյա լողավազանից, այգուց, սպորտային գոտուց, ավտոկայանատեղից, արհեստական լճակից և օժանդակ այլ շինություններից:

Հողամասին կից առկա են ինժեներական ցանցեր և երկու կողմից հարևան հողամասեր: Կառույցների թույլատրելի բարձրությունը սահմանվել է 32մ առաջին վերգետնյա հարկի զրոյական նիշից:

Կառուցապատման խտության գործակիցը 2.4 է, կառուցապատման տոկոսը 25%, իսկ կանաչապատման տոկոսը՝ 75%:

Ավտոկայանատեղիներ լինելու են 102 հատ, 46-ը վերգետնյա, 56-ը ստորգետնյա:

Նախատեսվող գործունեությունից ամենամոտ բնակելի տներից հեռավորությունը 50մ է կազմում, իսկ Հրազդան գետից հեռավորությունը 500մ է: Հանրապետական նշանակության Հ_55 ավտոմոբիլային ճանապարհից՝ 31 մ:

Հիմնական շինարարական աշխատանքներում հողային աշխատանքների ծավալը կազմելու են՝

հիմնական շենքի հիմքերի քանդման ,փորման արդյունքում՝ 20000մ^3

քոթեջների հիմնային աշխատանքների արդյունքում՝ 2000մ^3

ճանապարհների և տարածքի պլանավորում 15000մ^3

Ընդհանուր հանված գրունտի ծավալը կկազմի 37000 մ^3

Հետլիցքի համար նախատեսվող ծավալը՝ 20000 մ^3

Ավելցուկային 17000 մ^3 հողային զանգվածը կտեղափոխվի համայքային կառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Համաձայն ինժեներաերկրաբանական գնահատման արդյունքների՝ հողաբուսաշերտի հաստությունը նշված տարածքում կազմում է 20սմ, կառուցապատման ենթակա մակերեսից հողաբուսաշերտի հանված ծավալը կկազմի 7500մ^3, որը կպահեստավորվի և կօգտագործվի շինարարության ավարտից հետո տարածքի կանաչապատման ծրագրի իրականացման համար:

Նախագծով նախատեսված է 0.9 հա մակերեսով արհեստական լճակի կառուցում, որի տեխնիկական ցուցանիշներն են՝ հայելու ընդանուր մակերեսը 8618մ^2 է, ունի երկրաչափական սեղանի տեսք, առավելագույն լայնությունը 68մ է, իսկ առավելագույն երկարությունը՝ 132,6 մ, խորությունը 1-2մ:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Լճակի հիմնական օգտագործման նպատակը հանգստի կազմակերպումն է, որ պետք է ներառված լինի տարածքի ընդհանուր բարեկարգման կոնցեպտում: Լճակի այլ նպատակներով օգտագործում չի նախատեսվում:

Պարճառաբանական մաս. Հաշվետվության և նախագծի փորձաքննական գործընթացի շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսում և դրանց կանխարգելման, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումների արդյունավետության դիտարկումներ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են՝

- շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:
- օդային ավազանի՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում արտանետումների, հողային աշխատանքների՝ գրունտի քանդման, փորման հետլիցքի հետ,
- հողային, ջրային ռեսուրսների օգտագործման հետ,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների կառավարման հետ:

Եզրափակիչ մաս. Օրենսդրությանը համապատասխան՝ հանրային լսումներն իրականացվել են Ծաղկաձոր քաղաքի վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային լսումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Կոտայքի մարզպետարանի և Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ռիսկ են համարվում՝ հանրապետական նշանակության Հ-55 ավտոմոբիլային ճանապարհի պաշտպանական գոտու սահմանված 50մ-ի խախտումը, քանի որ ըստ նախագծի համալիրի նվազագույն հեռավորությունը ճանապարհի եզրից կազմում է 31մ:

Հաշվի առնելով գործընթացի մասնակիցներին՝ ՏԿԵ նախարարությանը լրացուցիչ հարցում է ներկայացվել լիազոր մարմնի կողմից ավտոմոբիլային ճանապարհի

02543163
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

անվտանգության գոտու խախտման վերբերյալ: Ըստ ստացված դիտողությունների՝ համալիրի սպասարկման տարածք ավտոմեքենաների մուտքը և տարածքից ելքը կազմակերպվելու է Հ-55 ավտոմոբիլային ճանապարհով, ինչը լրացուցիչ սոցիալական ծանրաբեռնվածություն է առաջացնելու տեղի բնակչության համար: Համալիրի սպասարկման տարածք ավտոմեքենաների մուտքի և ելքի կազմակերպման սխեման չի համապատասխանում անցումային-արագացման, դանդաղեցման գոտիների և անցումային տեղամասերի թույլատրելի երկարությունները սահմանելու վերաբերյալ ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմերի 136 կետի աղյուսակ 31-ի պահանջներին, դրան համապատասխան նաև փոփոխվելու է երթևեկության կազմակերպման սխեման:

Ճանապարհի հիմքի կայունության ապահովման տեսակետից խնդրահարույց է նաև Հ-55 ճանապարհի եզրից 13 մ հեռավորության վրա նախատեսվող 0,9հա մակերեսով արհեստական լճի կառուցումը, որը կարող է փլուզման պատճառ հանդիսանալ:

Լրամշակված հաշվետվությունը չի պարունակել վերը նշված խնդիրների վերաբերյալ անհրաժեշտ համաձայնությունները և թույլտվությունները լիազոր մարմինների կողմից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Մ. Մկրտչյան փողոց 60 հասցեում հյուրանոցային համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական փորձաքննական եզրակացություն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան